Ելէք դուռը բաց արէք,
Բերաններդդ թաց արէք,
Ես ձեզ համար կուրծքս լի
Կաթ եմ բերել իւղալի:

Ուկերը բաց են անում
դուռը, մայրը ծիծ է տա-
լիս նրանց, կրկին գնում
արածելու:

Այս ամենը տեսնում ու
լսում է գայլը: Նա մըտ-
քումը դնում է, որ ուկե-
րին խարելով՝ ներս մտնի
նրանց տնակը: Մի օր երբ
մայրը դուրսն է լինում,
գայլը գալիս է կամաց-
կամաց, թաթով զարկում
է դունը և ասում:

Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալպռտուրիկ այծիկներ,

Ելէք դուռը բաց արէք,
Բերաններդդ թաց արէք,
Ես ձեզ համար կուրծքս լի
Կաթ եմ բերել իւղալի:

Ուկերը մի լաւ ականջ
են դնում և հասկանում
են, որ դուռը բախողը ի-
րանց մայրը չէ, և պա-
տասխանում են.—Դու մեր
մայրը չես. մեր մօր ձայնը
բաղցը է ու բարակ, իսկ
քո ձայնը հաստ է ու խըռ-
պոտ. մեր մայրը դուռը
պողերովն է բախում, իսկ
դու չանգրտում ես ճան-
կերովը: Մի քիչ սպա-
սիր, ահա մեր մայրը կը-
գայ, բաշ հօղարն էլ հետը:

Բօղար շան անունը որ
լսում է գայլը, իսկո՞ն հե-
ռանում է սուս ու փուս:

Ուկերի մայրը գալիս է,
գովում է ուլիկներին և
ասում. «Դուք լաւ եք ա-
րել, որդիք, որ դուռը բաց
չէք արել, եթէ ոչ՝ նա
ձեզ ամենըիդ էլ կուտէր»:

ԿՈՐԱԾ ՀՈՐԹԸ

Զիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր պտրում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծք ու ծըծեր կաթով լիքը.
«Հորթուկս ուր է», նա բառանչեց,
Խեղճ պառաւին լացացըրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսեց մի բարակ ձայն,
Կովս իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,
Իսկ պառաւը տընքտընքալով
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծըծերը բերանն առաւ:

Ծըծեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան ըրթողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

1

Անտառի խորքում մի
ճօճ կար կապած և նրա
մէջ մի մանուկ զրած:
Լաց էր լինում մանուկը:
Մայր չըկար մօտը, որ
ծիծ տար, հայր չըկար,

որ պահպանէր: Անտա-
ռումը մարդ չըկար:

Մի գթոտ պախրակով
կաթնալից կրծքով եկաւ
ճօճի մօտ իր հորթուկի
հետ և տխուր ձայնով ե-
րեխին ասեց.

Սիրուն երեխայ,
որբ ես մնացել,
Քո անբախտ մօրը
գերի են տարել.
Նա զնաց, կորաւ,
էլ յետ չի գալու,
էլ ոչ մի անգամ
քեզ ծիծ չի տալու:
Նա քեզ փաթաթեց
լայն տերևներով,
Ճօճի մէջ կապեց,
«նանիկ» ասելով.
Նա լաց էր լինում
աղի արցունքով,
Իր վերջին նանիկն
ասում էր լալով.

«Մեծատերև
թաթաշոր,
«Մանրատերև
ոտաշոր,
«Քամին կանի՝
ժաժ կըտայ,
«Պախրէն կը դայ՝
ծիծ կը տայ»...

Ահա եկել եմ,
որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ պահպանեմ
իմ հորթուկիս պէս.
Հ

Պախրան ծիծ տրւաւ
երեխին, երեխան կշտա-
ցաւ ու քնեց: Պախրան
իր հորթին թողեց երեխի
մօտ, իսկ ինքը զնաց մօ-

տերքում արածելու, որ
կաթը շատացնի, և գայ
երկուսին էլ ծիծ տայ:
Հորթը մնաց երեխի մօտ,
օրօրեց նրան և նանիկ
ասեց.—

Նանիկ արա,
նանիկ, նանիկ.

Նանիկ արա,
սիրուն մանկիկ.

Ահա կրգայ իմ մայրիկը,
կուրծք ու ծըծեր
կաթով լիրը.

Ամեն գետնի
նա չի նստում,

Ամեն խոտից
չի արածում,

Նա չի խմում
ամեն ջրից,

Աղ չի լիզում
ամեն քարից.

Նա սարէսար
ման է գալիս,

Որբ է գտնում,
ծիծ է տալիս.

Որտեղ որ է,
ահա կոգայ,

Ինձ էլ, քեզ էլ
կուշտ ծիծ կըտայ.

Նանիկ արա,
նանիկ, նանիկ,

Նանիկ արա,
սիրուն բալիկ...

Պախրան կուրծքը լիրը
յետ դարձաւ արօտատե-
ղից և ծիծ տրւաւ երե-
խին էլ, հորթին էլ:

Ով որ տարով կըմեծա-
նայ, մեր երեխան օրով
մեծացաւ: Շատ չանցաւ,
նա դուրս եկաւ ճօճիցը,
մէկ օր չորեթաթ տը-
ւաւ, միւս օրը ոտքի կանգ-
նեց, մի քանի անգամ սա-
հեց, վայր ընկաւ, բայց
շուտով ամրացաւ և սկսեց
պախրի հետևից վազվը-
գել:

3

Մի թագաւոր որդի չու-
նէր. երազումն ասացին.
«Թագաւոր, Աստւած քեզ
մի որդի պիտի տայ ան-
տառի խորքումը»:

Մէկ անգամ այս անգա-
ւակ թագաւորը որսի գը-
նաց իր որսորդների հետ:
Շատ ման եկան, ոչինչ
չըգտան, բայց որ հասան
անտառի խորքը, այնտեղ
մի պախրի հետք գտան և
նրա մօտ մի երեխի ստ-
նատեղեր:

ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏԻԱԾ Է

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ շուտով գնաց թաք կացաւ,
Գիշերւայ մութը աշխարհս պատեց
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

Ամեն մարդ քաշւեց իր առւնը մտաւ,
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ,

Ամենը մնացին գար-
մացած և չէին հաւատում
որ երեխի կըմինի ոտնա-
տեղերը. բայց թագաւորն
իսկոյն յիշեց իր երազը և
հրամայեց որսորդներին,
որ երեխի հետքը քշեն և
ուր որ լինի՝ գտնեն նը-
րան:

Որսորդները գնացին և
երկու ժամ չանցած, մի
սիրուն տղայ բերին թա-
գաւորի մօտ և պատմե-
ցին, թէ ինչպէս գտան
նրան պախրի ծիծը ծը-
ծելիս:

Թագաւորը շատ ուրա-
խացաւ, երեխին գրկեց,
համբուրեց և անունը դը-
րաւ Պախրատուր: Պախ-
րատուրը մեծացաւ թա-
գաւորի պալատումը, լաւ
ուսում առաւ, վերջը դա-
ռաւ թագաւոր և մեծ զօր-
քով գնաց իր մօրն ազա-
տեց գերութիւնից:

Միայն խեղճ որբը, որ չունէր հայր,՝ մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը թոքիկ տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:

Բարի տան-տէրը, վերևից նայեց,
Մեր թշւառ որբին ներս հրաւիրեց,
Եւ այնուհետև տարաբախտ տղան
Ունէր իր համար տէր ու տիրական:



ԳԻՒԼՆԱԶ ՏԱՏԻ ԹՈՌՆԵՐԸ

Մէկ անգամ Գիւլնազ
տատին շըջապատեցին իր
թոռները և ստիպեցին, որ
տատը թոշնիկներ շինէ
նրանց:

Տատն էլ վեր առաւ
փոքրիկներից մէկին, դը-
րաւ ծնկան վրայ, երկու
ձեռքերից բռնեց և վեր
ու վայր թափ տալով եր-
գեց.

Ղու—ղու—ղու,
ա—ղու—ղու.

Նակ, նակ, ա—ղու—
նակ, թըռռռռ...
Յետոյ մի ուղիշն ըն-
կաւ տատիկի զիրկը և
ասեց.
—Տատիկ ջան, տատիկ,
ինձ էլ մի կաչաղակ շի-
նես...

Տատիկը նրան էլ դրաւ
ծնկներին և առաջւան պէս
երգեց.

Չա—չա—չա, կա—չա, չա
Ղակ, ղակ, կա—չա—
—ղակ, թըռռռռ...

—Տատիկ ջան, տատիկ,
ինձ էլ մի ծիտիկ շինես,
ասեց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր
ու վայր թոցնելով, երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ,
ծլրլում եմ,

Ծիւ, ծիւ, ծիւ.

Ոստոստում եմ,

թոչկոտում եմ,

Տիւ, տիւ, տիւ.

Արի, թկիկ,

արի, փետրիկ,

Որ ես դառնամ,

փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ,

պիծիկ—միծիկ,

թըռռռռռ...

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱԴ

Պ Ա Ռ Ա Հ Բ

Չու—ջու—ջու—ջու,
իմ վառիկներ,

Սիրուն ճուտեր,

հաւ մարիկներ,

Ուկեփետուր աքլարիկներ,

Եկէք կերէք

Ճեր հատիկներ:

ՄԱՆՈՒԿԱՆԵՐ

Չար փիսիկը մօտ է գալիս,
Սև ձագին է մտիկ տալիս,

Թաթը մեկնեց,

վզից բռնեց,

Սքաղաղներ,

հաւ մարիկներ,

Պահպանեցէք
Ճեր ճուտիկներ:

ԱՔԱՂԱՂՆԵՐ

Հասէք, հասէք, օգնեցէք,
Չար փիսիկին պատժեցէք:

Հ Ա Ի Ե Ր

Ժողովւնք, միանանք,
Չար փիսիկին վրայ տանք:


Բ Ո Ղ Ո Ր Ը

Տեսա՛ք, տեսա՛ք
ինչ եղաւ,

Գող կատուն որ
մեզ տեսաւ,

Խիստ վախեցաւ
ու վախաւ.

Ուրեմն ապրենք միասին,
Որ մօտ չըգայ թշնամին:



Ինչու աքլարը կանգ-
նած է բակում, պինդ-
պինդ կանչում է իր կու-
կուրիկուն. — Ենդուր որ
վաղուց արևն է ծագել,
բայց ծոյլ երեխան քնից
չի զարթել. Դեռ չի վեր

կացել, աղօթքն արել, դրպ-
րոցի դասը դեռ չի սովո-
րել: Կանչում է աքլարն
իր կուկուրիկուն, տղայոց
պարտքը միտներն է ձը-
գում:

Հարսի հաշիւը
Երկուշաբթի հաց կը-
թըխեմ, Երեքշաբթի լոշ
կըթըրջեմ, չորեքշաբթի
լըւացք կանեմ, հինգշաբ-
թի կար կըկարեմ, ուրբաթ
օրը պաս կըկենամ, շա-
բաթօրը ժամ կըզնամ, լոյս
կիրակի փոանց - փոանց՝
(հազիւհազ) կը զարդար-
փմ, կերթամ հօրանց:

Չորս եղանակ
Մարտը տալիս է
ձնծաղիկ,
Ապրիլը կապոյտ
մանուշակ,
Մայիսին բացւում է
կարդը,
Սոխակը երգում անուշակ:
Յունիսը մեզ խոտ է
տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձու խնձոր,
Եւ ուրիշ շատ
հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինի,
Նոյեմբերը բոխին ու տակը:

Դեկտեմբերին
Ճիւն է գալիս,
Յունւարին ծածկում
սար ու ձոր,
Փետրւարին սկսում է
Փոփոխակի ցուրտ ու
տաք օր:
Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալւում է
չորս շրջանում,
Այս պատճառով
չորս ժամանակ,
Չորս եղանակ
է մեզ բերում:

Տարւայ ամիսները
Յունւար, փետրւար,
մարտ, ապրիլ, մայիս,
յունիս, յուլիս, օգոստոս,
սեպտեմբեր, հոկտեմբեր,
նոյեմբեր, դեկտեմբեր:

Գդալ-փոխ
Ամառն էր: Հունձն ըն-
կել էր: Մէկ լուեցի ու
մէկ աշտարակցի միասին
հունձ էին անում: Ճաշի
ժամանակ նրանց համար
մածուն բերին մի մեծ
մաթրաթով, բայց երկու
գդալի տեղ մէկն էին բե-
րել:
Երբ որ մածնի բրթու-
ճը պատրաստեցին, աշ-
տարակցին ասեց:

— Գդալը մէկ հատ է.
արի գդալ-փոխ անենք,
գդալ-փոխ ուտենք:

Լուեցին շրհամաձայ-
նեց, ասեց.

— Թող ես գդալով ու-
տեմ, զու ձեռով կեր:

— Ոչ պատասխանեց
աշտարակցին: Որովհետև
գդալ-փոխ չես ուզում,
արի մէկ բան ասեմ, այն-
պէս անենք: Ով որ մեզա-
նից եօթը գիւղի անուն
տայ վրայ վրայ, շուտ-
շուտ, գդալով նա ուտի:

— Լաւ. առաջ ես կա-
սեմ. ասեց լուեցին ու
սկսեց:

— Հէ, Լուսի, հէ,
Ուզնուն...լար...

Լուեցին միայն երկու
գիւղի անուն տըւաւ, այն էլ
չըկարողացաւ շուտ-շուտ
ասել ու սուս կացաւ. յե-
տոյ աշտարակցին սկսեց,
և կարկուտի պէս վրայ
տըւաւ.

Ուշի—Ուշական
Փարպի—Բիւրական
Թալին—Թալիշ—

Մաստարա
Գդալի պոչը գէմն արա
Ասեց ու գդալն առաւ
լուեցու ձեռքիցը: Լուե-
ցու բերանը մնաց բաց.
բայց էլ ինչ կարող էր ա-
նել. խաղը տանուլ էր
տըւել.

Արհեստ ընտրող մա-
նուկը

Թորոսի որդին մի ծոյլ
տղայ էր, ոչ գիր էր սով-
րում և ոչ մի արհեստ:

— Ի՞նչ արհեստ սով-
րեմ.— Քիրնթֆընթում էր
նա. կեկչութիւնը շատ
լաւ արհեստ է, բայց բո-
րբկ ոտքով, ամանում
կանգնել, արագ պտըտել,
դա այնքան հեշտ չէ: Ա-
ւելի հեշտ է փուքսի վչե-
լը, բայց այդ իմ ձեռքում
երկար չեն թողնիլ: Վար-
պետ էլ դառնամ, ի՞նչ եմ
անելու. պէտք է մատնե-
րով փոքր ինչ բամբակով
տաք-տաք պղընձին նա-
շաղիր քսեմ, ձեռքերս այ-
րեմ: Զէ, այդ իմ բան չէ:

— Դարբնի մօտ կեր-
թամ, այնտեղ էլ փուքս
կայ, ձմեռն էլ տաք է,
բայց մեծ ուժ պէտք է
այդ գործի համար. ահա-
գին մուրճով երկաթը ծե-
ծել որ նա տափակի, — ես
այդ չեմ անիլ, ինչ կուզի
լինի:

— Նալբանդը լաւ է:
Մեխի ծայրը սրել և պայ-
տեր շակել. այդ շատ
դժւար չէ, բայց մէկ ա-
մեհի ձիու ոտք բռնել,
ծնկանը դնել — երկիւղա-

լի է. ձիու աքացին իմ
ընկերների ապտակից
թունդ է: Զէ, իմ կարծի-
քով դա լաւ արհեստ չէ:

— Դերձակութիւնը մա-
քուր արհեստ է, լաւ միտս
ընկաւ: Բայց ինչ եմ ա-
սում. ամբողջ օրերով
ծալպատիկ նստել, գլուխ
քաշ գցած կարել ու կա-
րել, ոչ խաղալ կը լի և ոչ
վաղվրդել: Զէ, դա էլ բան
չէ:

— Ինչու չրժնամ որ-
մնադիր դառնամ, բարձր
պատերի ծայրերին կանդ-
նեմ, այնտեղից կանչեմ.
— «Քար ու կիր տըւէք, ա-
ղիւս ձգեցէք»: Այսպէս կը-
գոռամ և կը համայեմ, որ
աշխարհք տեսնի, թէ ես
վարպետ եմ, գործս լաւ
պիտեմ: Բայց վայ թէ յան-
կարծ այդ բարձր տեղից
ոտքս սլկընի և թրմփալով
ներքն զլորւիմ: Զէ, այդ
հեշտ գործ չէ և ոչ իմ
բանն է:

Երկի չկայ այնպիսի
արհեստ, որ ես հաւանեմ,
զնամ սովորեմ: Թէ հիւն
դառնամ, ոտքս կը կտրեմ.
Կօշկակար դառնամ, ձեռ-
քըս կը ծակեմ. ոսկերիչ
դառնամ, մատներս կայ-
րեմ. թէ բրուտ դառնամ,

*) Կաերը ախտիկ անել=տանիքին=կարին նստել:

ցեխ պիտի կոխ տամ.
վարժարան զնամ, գիր
պիտի սովորեմ: Զէ, իմ
կարծիքով ամենից լաւ է
ոչինչ չը կինեմ, ոչինչ չը-
սովորեմ: Բայց այնուհետև
ես ինչ կը դառնամ:

Ծոյլ աղջիկ

Բանն ինչ կանեմ,
կեղտոտ է,
Բամբակը կորիզոտ է,
Մետաքս պիտի որ մանեմ,
Մաստակ պիտի որ ծամեմ,
Կտերը տիտիկ*) անեմ,
Անցնողին մտիկ անեմ,
Ուտեմ, խմեմ,
Մթնի, քնեմ:

Առածներ

Իմացողին մին, չիմա-
ցողին հազար ու մին:—
Իմացողին մէկ ասա, չի-
մացողին հա կաց, հա ա-
սա:— Սկին սապոնն ինչ
անի, խկին խրատն ինչ
անի:— Ով որ երգի ամա-
ռը, նա պար կը գայ ձը-
մեռը:— Մի բաժակ ջուր,
ով ուզի՝ տուր:— Եսօրւայ
փուշը, էգուցւայ նուշը:—
Հացն ուտելով, բանն ա-
նելով:— Ապրել կայ՝ եր-

կաթ է, ապրել կայ՝ ար-
ծաթ է:— Ձը կի գողը ձիու
գող կը դառնայ:— Տաշած
քարը գետնին չի մնալ:—
Ծերանաս, ծերի պատիւն
իմանաս:— Կուշտը քաղ-
ցածին մանր կը բռթի:

Պառաւն ու այծը

Կար չը կար երբեմըն
Մի աղքատ պառւիկ,
Ունէր մեր պառաւը
Կաթնատու այծիկ.

Չափկ մափկ,
Կաթնատու այծիկ:

Պառաւը ձմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատառը
Նըրա հետ կիսեց.

Միրով յօժար
Նըրա հետ կիսեց:

Երբ որ ձիւնը հալւեց,
Բըսաւ կանաչ խոտ,

Պառաւն իր այծիկը
Դուրս տարաւ արօտ.

Ուրախ—զըւարթ,

Դուրս տարաւ տրօտ:

Թանձը մառախուղը
Գետինը պատեց,

Պառաւի առջեկից
Այծը կորցրեց:

Ափսոս, ափսոս,

Այծը կորցրեց:

Պառաւը լաց էլաւ,

Իսկ գայլը օռնաց,
Մոլորած այծիկը

Բարձր մը կը կաց:

Մը կը կ, մը կը կ,
Այծը մը կը կաց:
Գայլն իսկոյն մօտեցաւ,
Այծին շալակեց.
Պառաւը հետևից
Բարձրածայն գոչեց.

«Հայ-հայ, վայ-վայ»,
Բարձրածայն գոչեց:

Խեղճը մնաց կանգնած,
Մի փունջ խոտ ձեռին,
Անմիտիթար ձայնով
Կանչելով այծին.

«Եկ—եկ,—եկ—եկ»:
Կանչելով այծին:



Տառերի գանգատը

Մեր տըւած փայտից
Կրակ են անում, տուն
տաքացնում, թոնիրը վա-
ռում, կերակուր եփում,
փափուկ հաց թխում, ու-
տում, կշտանում, բայց
մեզ չեն յիշում, մեզ չեն
պահպանում, այլ անգութ
կերպով մեզ կոտորում
են, մեզ փչացնում, ոչըն-
չացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մարաքներ, ժամեր ու վանքեր. մեր տախտակներից յատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան, և այլ շատ տեսակ կահ ու կարասիք: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են շինում՝ գետերով անցնում. սայլեր են շինում, ամեն ինչ կրում. գուման են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շինում՝ եզ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ մանկիկ օրօրում՝ նաւեր են շինում՝ ծովի մէջ լողում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խնձոր. նուռ ու սերկել, կեռաս ու սալոր. դիղձ կարմրաթուշիկ, ծիրան անուշիկ: Հապա խաղողը... և քանի տեսակ. կանաչ ու կարմիր, թուխ-թուխում ու սիպ-

տակ, և այդ ամենը մարդիկն են ուսում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում:

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեզ ինայեցէք, մեզ պահպանեցէք և ձեր հանդերում, ձեր պարտէզներում ծառեր տընկեցէք:

Ծիծեռնակ

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգստանում, այլ միշտ թըռչելով, դէս դէն ընկնելով՝ նիւթ է հաւաքում:

Նիւթ է հաւաքում, խոտ ու կաւ կրում, իր բունը շինում, բմբուլով լցնում, լաւ փափկացնում ու մէջը մտնում:

Մտնում է մէջը, երեք ձու ածում և երեք շաբաթ վրան թուխսնստում, ձագուկներ հանում:

Փափլիկ ձագերը դուրս եկան թէ չէ, մայրը թըռչում է, դէս ու դէն ընկնում, մժեղներ բերում, նրանց կերակրում:

Ծի քիչ ժամանակ որ անց է կենում, սիրուն ձագերը թեաւորուում են, բնից դուրս թոչում և իրանց մօր հետ ճանապարհ

ընկնում, լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գնում:

Չմեռն անցնում է, գարունը մտնում, մեր ծիծեռնակը էլի գալիս է, իր բունը գտնում, ճշում, ծըլւըլում, քանդւածը շրտկում, կարկատում, շինում,

նոր ձւեր ածում, նոր ձագեր հանում, պահում մեծացնում, աշնան ժամանակ առաջւայ նման, ճանապարհ ընկնում,—լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գընում:



Մեղուն ու մարդը

Մեղուն մէկ անգամ հարցրեց իր տիրոջը.

—Քո կենդանիներից որըն է ամենից օգտակարը:

Գիտեմ, դու երևի կարծում ես, թէ ամենից օգտակարը դու ես, բայց սխալում ես, պատասխանեց տէրը:

—Ի՞նչպէս, տէր, որն է այն կենդանին, որ ինձանից աւելի օգտակար է:

—Ոչխարը:

—Այդ հաջիւ չէ, տէր, ոչխարն իմ հասակակիցն չէ: Նա մի ահազին կենդանի է, իսկ ես մի միջատ եմ: Դու պէտք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

—Շատ բարի. շերամը բեղ պէս փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

—Շերամը որն է:

—Շերամն այն խմաստուն որդն է, որ մեզ համար աննման բնքոյշ մետաքս է շինում:

—Հա, խմացայ. այդ այն շատակեր ճիճուն չէ, որին անգաղար կերակրում էք թթան տերևներով:

—Նա ինքն է:

—Բայց գիտե՞ս, տէր, նրա չափ որ մեզ էլ կերակրէք, մենք մեղրի տեղուկի կը լինենք ձեզ համար: Դուք ոչ մի կենդանի չունիք, որ իր կերակրուը

մեզ նման ինքը լինի շինելիս և ուրիշներին էլքաժին լինի տալիս. Այնպէս չէ, պարոնս:

— Այո, այդ կողմանէ դու ուղիղ ես. մենք դէպի ձեզ շատ ապերախտ ենք,

որովհետև բոլորովին անխնամ ենք թողնում ձեզ...
— Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխանիցը և թռաւ նստեց վարդենու վրայ:

ՄԵՂՈՒ

Հա ծագեցաւ արեգակը,
Հա ծաղկեցաւ մանուշակը.
Մեղուն թողեց իր փեթակը
Տըզտըզալով, տըզտըզալով:
Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղը առաւ քաղցը անուշիկ,
Մոմը տարաւ հոտուտ լուսիկ,
Պըզպըզալով, պըզպըզալով:
Անուշ մեղը մանը տըզոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց,
Իսկ չարերին կրճ ու խայթոց,
Կըսկըծալով, կըսկըծալով:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃՐ

Եզր, կովը և շունը վիճում էին միմեանց հետ և ամեն մինը պնդում էր, թէ մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում:

— Ի հարկէ, նա ինձ ամենքիցդ շատ է սիրում, ասում է Եզր, և գիտէք ինչու համար: Նրա համար, որ ես եմ նրա արօրն ու տափանը քաշում, ես եմ նրա հագնելիք առնում: Ուրեմն, դուք ինչ էք կարծում, ես որ չըլինէի, նա Բնչպէս կարող էր ապրել:

Ինձ է լծում սայլում և իր ցորենը տանում ջաղաց, այնտեղ ալիւր շինում. յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալիւրը և իր տան համար առուտուր անում, երեխանց համար հագնելիք առնում: Ուրեմն, դուք ինչ էք կարծում, ես որ չըլինէի, նա Բնչպէս կարող էր ապրել:

— Այդ ճշմարիտ ես ասում, ասեց կովը: Բայց մեր տէրն ինձ ամենքիցդ աւելի

որ սիրում է, այդ նրա համար է, որ նա իմանում է, թէ քեզ նման աշխատասէր ու ժրաջան եզնուկին ես եմ պահել մեծացրել:

Այս մէկ: Մէկ էլ որ՝ նըրա գերդաստանը իմ կաթնովս եմ պահում: Այն մածունն ու կարագը, այն սէրն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէսպասը, որ ամեն օր խըպշտում են, ում տըւածն է: Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չընիմ, բոլորը քաղցած կըկոտորւին:

— Դու էլ ես ճշմարիտ ասում. սիրուն կովիկ, սկսեց Շունը: Ո՞վ կարող է ուրանալ քո լաւութիւնը: Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տըւած անուշ թանին: Մեր տանտիկինն ամեն խնոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ: Ես շատ երախտագէտ եմ, ոչ ոքի լաւութիւն չեմ կարող ուրանալ: Բայց գիտէք ինչ կայ: Դուք մի նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում. դրա համար մեծ պատճառ կալ և ահա ասեմ, թէ ինչ է դրա պատճառը...

Եւ շունն սկսեց մէկ-մէկ հաշւել, թէ ինքն ինչ ու ինչ է անում:

Ասած է՝ շունը որ հաջել սկսի, էլ չի գաղարիլ: Այնքան հաչեց եզան ու կովի հետ, որ տէրն իմացաւ, գնաց նրանց մօտ, շան լեզւիցն ազատեց, ասելով. «Թողուր դրանց, Բնդար, դու չըգիտե՞ս, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք, ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:»

ՄԵՂՈՒՆ ՈՒ ԱՊԱԼՆԻՆ

1. ՓՈՐՃԱՆՔ

Ժրաջան Մեղուն ծաղկալից գաշտում իր մեղրի համար նիւթ էր հաւաքում: Արևի տակին շատ աշխատելով, Մեղուն շատ յոգնեց և խիստ ծարաւեց:

Նրանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար: Մօտեցաւ լճին, վեր եկաւ ափին, որ քիչ ջուր խմի, ծարաւը կոտրի, նոր ուժ ստանայ, թոշի տուն գնայ: Հէնց որ կուացաւ, որ ջուր կում անի, յանկարծ գլորւեց, ընկաւ ջրի մէջ: Նա շատաշխատեց, որ ցամաք դուրս գայ, բայց մի փոքր ալիք նըրան ներս քաշեց, ափից հեռացրեց:

Այսպէս խեղճ Մեղուն ցամաքից զրկւեց, ջրի երեսին թևերը փռեց և յոյսը կտրած՝ մաց մեկնըւած:

2. Օգնութիւն

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօտեցաւ ճին և նայեց տեսաւ մեր խեղճուկ Մեղին՝ յուսահատ փռւած ջրի երեսին: Խսկոյն շտապեց, մի տերեւ կտցեց և տարաւ Մեղւի առաջը ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերեսի վրայ, խելքը ժողովեց, գէս ու դէս նայեց, որ տեսնի ով էր իր աղատողը, մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի Աղաւնուն: Շատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղաւնուն գովել, շնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղրի միտքը, և ոչինչ չուզեց լսել նրանից, այլ թռաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

3. Երախտագիտութիւն

Մի օր մեր մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում և տղտղալով Աղաւնուն գո-

վում: Մեղըւի հանդէպ, մի ծառի վրայ նստած ննջում էր ծանօթ Աղաւնին:

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կոացըրած, չար օձի նման սողում է սուս-փուս դէպի Աղաւնին: Մեղուն հասկացաւ, որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թոշունին՝ իր բարերարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացըրեց և հրացանը երեսին բռնեց: Հէնց մատը դըրեց կայծառի ոտքին և ուզեց քաշել, զործը վերջացնել, այդ իսկ ըոպէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի ձեռքն այնպէս խալթեց, որ նա վեր ցատկեց: Նրա հրացանը նշանից շեղւեց և իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից զարթեցըրեց ու տեղից թըրցըրեց:

Այսպէս մեր մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց, աղատեց:

Ինչ որ ցանես, այն կը հնձես: Արած լաւութիւնը չի կորչիւ:

Փոքրիկ գառը

Մի փոքրիկ գառ, ձիւնի նման մաքուր, սպիտակ, Մի օր գնաց մօր հետ դաշտը, որ արածի: Դաշտ որ հասաւ, սկսեց թոչել քարերի տակ, էլ չէր ուզում փոքր միջոց հանգիստ նստի: Այս ու այն կողմ վազվելով չափ էր ընկնում, թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում: — Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը. Զգնյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը: Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարձնում, իր խաղան ու վազվելն է շարունակում: Եւ վերջապէս՝ երբ մօր խօսքին ականջ չարաւ, Սարի գլխին իր գժութեան պատիժն առաւ. Մի մեծ քար կար այնտեղ ընկած, նրա ծայրում Մեր գառնուկը թոչկոտելով խաղ էր անում, Մէկ էլ յանկարծ նրա վրայից գլորւեցաւ, Ոտի մէկը տակով էլաւ, կոտրւեցաւ:

Մեղուն ու հաւը

Հաւը Մեղւի վրայ ծիծաղելով՝ ասեց մէկ անգամ.

— Ի՞նչ անշնորհք ճանձ ես դու, ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թոչկոտում և ոչ մի բանի պէտք չես գալիս: — Իսկ դու, Հաւիկ մարիկ, ի՞նչ ես շինում, հարցրեց Մեղուն:

— Միթէ չըգիտե՞ս, թէ ի՞նչ եմ շինում ես. քեզ նման պարապ-սարապ չեմ տըզարդում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ ձու. գիտե՞ս մէկ ձուն քանիսն է:

— Գիտեմ, գիտեմ, հաս-

կացայ: Բայց ես մինչև հիմա կարծել եմ, թէ դու օրը հարիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու ածել, անխելը Մեղու:

— Հապա եթէ քո ածածըդ ընդամենը մի ձու է, էլ ի՞նչո՞ւ ես հարիւր անգամ կըրկչում, թէ հայ, հարայ, լսեցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով՝ այսքան կըրկչալուն մի ձուն շատ քիչ է: Այնպէս չէ, իմաստուն Հաւիկ մարիկ:

— Բայց դու ի՞նչ ես շինում, գու, որ իմ մի ձուն քիչ ես համարում:

— ես ինչ որ շինում եմ,
քեզ պէս կըրկըչալով չեմ
յայտնում ուրիշներին: ես
գլուխս քաշ գցած, մեղք եմ
շինում: Գիտե՞ս ինչ է մեղքը:
Դա հաւի կերակուր չէ, քո
խելքի բանը չէ, Հաւիկ
մարիկ:

Բառախաղ

Պօղոսն ու Պետրոսը բա-
ռախաղի էին տալիս: Պօղոսը
վարժւած էր, իսկ Պետրոսը
նոր էր սովորում:

Ահա թէ ինչպէս էին խա-
ղում:

Պօղոս. Պետրոս, ասա, տու-
նը:

Պետրոս. Տունը:

Պօղոս. քեզ կծի շունը:

Պօղոս. Ասա դուրը:

Պետրոս. Դուրը:

Պօղոս. Ընկնիս ջուրը:

Պօղոս. Ասա պաս:

Պետրոս. պաս:

Պօղոս. Ուտես թանէ սպաս:

Պետրոս. Էլ չեմ ասում. հի-
մա ես կըհարցնեմ քեզ,

Պօղոս. Լաւ, հարցրու:

Պետրոս. Ասա ծիտ:

Ուսումնարան

Դաշտը սիրուն է դալար բոյսերով
Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով:

Պօղոս. Ծիտ:

Պետրոս. ուտես մախոխ:

Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս:
Ես ասում եմ ծիտ, դու
ասում ես մախոխ, այդ
ինչպէս կարելի է. տես-
նում ես՝ նման չեն: Դեռ
սպասիր էլի, ես կըհար-
ցնեմ—

Ասա ծիտ է:

Պետրոս. Ծիտ է:

Պօղոս. Պետրոսն անմիտ է:

Պետրոս. Էհ, էլ չեմ ասիլ,
ես անմիտ չեմ:

Պօղոս. Լաւ, շարունակենք, էլ
այդպէս չեմ ասիլ.
Ասա հաւ է:

Պետրոս. հաւ է:

Պօղոս. Պետրոսը լաւ է:

Պօղոս. Ասա սանձ:

Պետրոս. Սանձ:

Պօղոս. Պետրոսն ուտի տանձ:

Պետրոս. Հիմա ես կըհարցը-
նեմ: Ասա—սամի:

Պօղոս. Սամի:

Պետրոս. Շաքարը ծամի:

Պետրոս. Ասա հաց:

Պօղոս. Հաց:

Պետրոս. Մի քիչ կաց:

Պօղոս. Էհ, բաւական է, դու
լաւերը չես իմանում:

Ուսումնարանը նոյնքան սիրուն է

իր ուշիմ, խելօք, Ժիր մանուկներով:

Սիրուն է ծառը կանաչ ճղներով:

Փունջ-փունջ կախոտւած իր պտուղներով:

Ուսումնարանը նոյնքան սիրուն է

իր առաքինի, խելօք սաներով:

Աստւած, պահպանիր դու շատ օրերով

Մեր անդաստանը իր մշակներով:

Եւ մենք նորանում զուգւինք, զարդարւինք

Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով:

Ոսկի և երկաթ

Ոսկին երկաթին անար-
գելով, ասեց մէկ անդամ.
— Երանի գիտենամ, դու ին-
չացցւ ես, որ մետաղների
կարգն ես ընկել. քո սև ու
ժանգոտ երեսովը մարդու
վրայ զգւանք ես բերում:
Նայիր ինձ վրայ. տես՝ ինչ-
պէս գեղեցիկ եմ փայլում,
ինչպէս շողշողում: Նայիր
մեր սիրուն օրիորդների ու
հարսների ականջներին ու
մատներին, դու կըտեսնես
իմ փառքն ու պատիւը. նա-
յիր նրանց ճականների շար-
քերին, դու կըտեսնես իմ
փայլն ու գեղեցկութիւնը:
Զեմ հաշտում գինդերը, գըն-
դասեղները. գիտեմ որ դու
այնքան կոշտ ու կոպիտ ես,
որ այդպէս քնքուշ բաների
մատին ոչ ճաշակ ունիս, ոչ
հասկացողութիւն:

Երկաթը պատասխանեց
Ոսկուն.

— Ես չեմ ուրանում, Ոս-
կի աղա, որ դու գեղեցիկ ես,

ամեն բանի զարդն ու զար-
դարանքը դու ես, գինըդ
շատ բարձր է, աղքատի բան
չես, բայց ինչու ես չափեցդ
դուրս գոռողանում: Քո սի-
րուն օղակներդ ոչ ականջի
լսելիքն են աւելացնում, ոչ
քո մատներին ու կոներին
զօրութիւն ու ժրութիւն են
տալիս: Ճակատների փայլուն
շարքերը կլիխն խելք չեն
տալիս. ոչ կուրծքերի նուրբ
մանեակները սրտին գութ ու
խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդ-
ներին, որ քեզ այդ շափ պա-
տիւ են տալիս, քեզ համար
հալւում, մաշւում ու բարա-
կացաւ ընկնում: Իմ մի փոք-
րիկը ասեղը քո բոլոր զար-
դարանքներից աւելի է օգուտ
տալիս: Գիտե՞ս, Ոսկի աղա,
իմ փոքրիկ ասեղը քանի տուն
է պահում, քանի որբիկ կերա-
կրում: Իմ խոփն ու ձեիչը
ամբողջ աշխարհին հաց են
տալիս:

Մարդիկ ինչ որ շինում
են, կամ պէտք է կարեն,
կամ պէտք է ծեծեն, կամ
պէտք է խարտոցեն, կամ
պէտք է կարկատեն։ Իմ ու-
րագն ու կացինը որ չըլինին,
իմ դուրն ու շաղափը, իմ
սղոցն ու մուրճը, իմ կարիչն

ու խարտոցը, էլ կարո՞ղ էին
մարդիկ քար քարի վրայ դը-
նել փայտ փայտի վրայ։
Ահա այդպէս պարծեն-
կու ես դու, Ուկի աղա, քո
փայլից կուրացած՝ ուրիշի
լաւութիւնը չես տեսնում։

Երգ պանդխտի

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ժլր, ինձ ասա,
Թոչում ես այդպէս արագ.
Ա՛խ, թոկիր, ծիծեռնակ,
Ծնած տեղս՝ Աշտարակ,
Անդ շինիր քո բունը—
Հայրենի կտուրի տակ։
Անդ հեռու ալեոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէցօր։
Երբ տեսնես դու նըրան,
Ինձնից շատ բարկ արա,
Ասա թող նստի լայ
Իր անբախտ որդու վրայ։
Դու պատմիր, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշւել, եղել կէս։
Ինձ համար ցերեկլը
Մութ է զըջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։
Շուտով սառ հողի տակ
Կըպառկեմ այստեղ մենակ,

Թողնելով հօրս սրտում
Ցաւալի լիշտակ։
Դէն, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, գնա արագ
Դէպի հայոց աշխարհը,
Ծնած տեղս Աշտարակ։

Արշակի շարադրութիւնը

Երկար ժամանակ սպա-
սում էի, թէ երբ պէտք է ինձ
ուսումնարան տանեն։ Ուսու-
մնարանի մօտովն անցնելիս՝
որ լսում էի աշակերտների
երգելու ձայնը, սիրոս մի ու-
րիշ կերպ էր դառնում, մըտ-
քումս ասում էի, ախ, երբ
կըլինի, որ ես էլ սրանց մէջը
լինիմ, սրանց պէս կարդամ,
սրանց պէս երգեմ, սրանց
հետ խաղամ. արդեօք կար-
ժանանամ այդ օրին։

Վերջապէս փափազիս հա-
այ. հայրիկս մի առաւօտ
յայտնեց, թէ երկուշաբթի օրը
քեզ տանելու եմ ուսումնա-
րան և այսօր պէտք է գնամ քո
ուսման պիտոյքներն առնեմ
Այս օրը էլ ես հաց չըկերայ
չափականց ուրախութիւնից։

Երեկոյին հայրս եկաւ
տուն։ Ի՞նչ ասես որ չէր ա-
ռել ինձ համար. — թուղթ, թա-
նաք, թանաքաման, գասա-
դիրք, տեսակ-տեսակ գրչա-

կոթներ, մատիտներ, տետ-
րակներ։ Բոլորը ջոկ-ջոկ թղ-
թերում փաթաթեցի ու դրի
պահարանումս, մինչև հասաւ
երկուշաբթին՝ ուսումնարան
գնալուս օրը։

Նոր տարի

Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի,
Մանը տըղոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր։
Մանը տղայք են ուրախ,
Ունին կաղին գողինաղ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, ունաբ և ընկուզ։
Մանը տղայք, չըմունաք,
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ ու անօդնական։

Նոքա հայր ու մայր չունեն.
Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կամէ ձեզ Աստւած։

ԱՌԱԽՈՏԻԱՅ ԱՂՕԹՔ

Ո՞վ Տէր մեր գթոտ, Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ Քո լոյտ անազօտ:
Թող լուսաւորւին մեր միտքն ու հոգին,
Որ Քո լոյս անւան լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սըբոյ. ամէն:

ՏէՐՈՒԻՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, Որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո,
Եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս
յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր. թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք
մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձու-
թիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ. զի Քո է արքայու-
թիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն.

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հաղար բարի—
Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:
Իսկ ես ինչ ունիմ որ ինչ տամ Քեզի.
Առջևու կընկնիմ, կենամ աղօթքի—
«Ճնորհդ տուր ինձ, որ ճնողներիս,
Վարժապետներիս և իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ Քեզ՝ հաճելի»:



ԹՈՅԼԱՏՐԻԱԾ ԵՆ ՊԱՏՇԱՁԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ուսումն Մայրենի Լեզվի. ա. տարի «Պատ-			
կերաւոր ալբբենարանով»	.	.	20 կ.
Ուսումն Մայրենի Լեզվի. բ. տարի	.	.	40 կ.
Ուսումն Մայրենի Լեզվի. երրորդ գիրք	.	.	70 կ.
Ուսումն Մայրենի Լեզվի. չորրորդ գիրք	.	.	90 կ.



ԳԼԽԱՀՈՐ ՊԱՀԵՍՏԱՆԵՐԸ ԳՏՆԻՈՒՄ ԵՆ

ԹԻՖԼԻՍ—«Կհնարոնական» և «Գուտաեմբերդ» գրավա-

ճառանոցներում:

ԵՐԵՒԱՆ—Ա. Օհանջանեանի և Պ. Յովհաննիսեանի գրա-

վաճառանոցներում:

ԲԱՔՈՒ—«Սօտրուղնիկ» և «Թառայեանների» գրավաճա-

ռանոցներում:

Բոլոր գումարով գնողներին զեղչ է լինում՝ յօ-

րինողի կողմից 30%.

Հեղինակի հասցեն—Լեռմօնտովեան փողոց, տուն № 4.